

DOI: 10.59560/18291155-2025.4-114



ՍԵՐԳԵՅ ՂԱԶԻՆՅԱՆ

*Երևանի պետական համալսարանի
Եվրոպական և միջազգային իրավունքի
ամբիոնի դասախոս,
Եվրոպական ուսումնասիրությունների
կենտրոնի փորձագետ,
Հայաստանի ամերիկյան համալսարանի
Հումանիտար և հասարակական
գիտությունների ֆակուլտետի դասախոս*

**ՀՈԳԵԿԱՆ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐ ՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԱՆՑ ԽՈՑԵԼԻ
ԴԻՐՔԻ ՉԱՐԱՇԱՀՈՒՄԸ ԵՎ ԹՐԱՖԻՔԻՆԳԸ ԿԱՆԽԵԼՈՒ
ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՌՈՒՑԱԿԱՐԳԵՐԸ**

Ամփոփագիր

Հոդվածը դիտարկում է, թե ինչպես է հոգեկան առողջության խնդիր ունեցող անձանց խոցելիությունը հանգեցնում նրանց թրաֆիքինգի և շահագործման բարձր ռիսկի՝ հատկապես հոգեբուժական և սոցիալական խնամքի հաստատություններում: Վերլուծության առանցքում է «խոցելի դիրքի չարաշահման» միջազգային իրավական հայեցակարգը, որն ընդգծում է այն իրավիճակները, երբ անձը չունի իրական և ընդունելի այլընտրանք՝ խուսափելու շահագործումից: Հայաստանի իրավական դաշտը ճանաչում է հոգեկան առողջության խնդիրներով պայմանավորված անօգնական վիճակը, սակայն գործնականում առկա են համակարգային բացեր՝ ոչ հոժարակամ հոսսափտալացման, խնամակալության, դատական վերահսկողության և անկախ մշտադիտարկման ոլորտներում: Հոդվածը բացահայտում է, որ փակ հաստատություններում շահագործումը կարող է դրսևորվել հարկադիր աշխատանքի, ֆինանսական միջոցների յուրացման կամ ազդեցության գործադրման միջոցով, ինչը խաթարում է անձի ազատության և արժանապատվության հիմնարար իրավունքները: Եզրափակիչ հատվածում ներկայացվում են քաղաքականության մշակման և օրենսդրական բարեփոխումների վերաբերյալ առաջարկություններ՝ ուղղված պաշտպանական մեխանիզմների ուժեղացմանը, ռիսկերի վաղ հայտնաբերմանը, խնամակալության համակարգի բարեփոխմանը և տվյալների վրա հիմնված քաղաքականության ձևավորմանը:

ՍԱՀՄԱՆԱՐԴՈՎԱԿԱՆ ՂԱՏԱՐԱՆ 4(121)2025

Հիմնաբառեր. խոցելի դիրքի չարաշահում, հոգեկան առողջություն, մարդկանց թրաֆիքինգ, շահագործում, հոգեբուժական հաստատություններ, խնամակալություն, մարդու իրավունքներ:

Հոգեկան առողջության խնդիր ունեցող անձանց թրաֆիքինգի և շահագործման դեմ պայքարի իրավունքահեն քաղաքականություն և պաշտպանության մեխանիզմներ

Հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց իրավունքների պաշտպանության ապահովումը բախվում է համակարգային մարտահրավերների, հատկապես այնպիսի պայմաններում, ինչպիսիք առկա են հոգեբուժական կազմակերպություններում, որտեղ հիմնարար իրավունքները, այդ թվում՝ անձնական ազատության իրավունքի ապահովումը կարող են վտանգվել:

Մարդկանց թրաֆիքինգը և շահագործումը խախտում են մարդու հիմնական իրավունքները և նրա արժանապատվությունը: Այն միջազգային մակարդակով ճանաչված է որպես ժամանակակից ստրկության ձև: Այս հանցագործությունը հիմնված է լինում նաև անձի խոցելի վիճակի շահագործման վրա, ինչպես սահմանված է ՄԱԿ-ի Անդրազգային կազմակերպված հանցավորության դեմ պայքարի կոնվենցիան լրացնող արձանագրությամբ¹: Մարդկանց թրաֆիքինգը սահմանվում է որպես մարդկանց հավաքագրումը, տեղափոխումը, փոխանցումը, թաքցնելը կամ ստանալը՝ որոշակի «միջոցներով» շահագործման նպատակով:

Սույն հոդվածի վերլուծության հիմնական առանցքը կլինի այդ միջոցներից մեկը՝ խոցելի դիրքի չարաշահումը («the abuse of a position of vulnerability»), որը նշանակում է այնպիսի իրավիճակի չարաշահում, երբ անձը «չունի իրական և ընդունելի այլընտրանք, բացի չարաշահմանը ենթարկվելուց»²: Այս հայեցակարգը դիտարկում է նաև հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց՝ մարդկանց թրաֆիքինգի կամ շահագործման տեսանկյունից խոցելիության խնդիրը:

Ներպետական օրենսդրությամբ ամրագրված է, որ անձի հոգեկան առողջության խնդիրներով պայմանավորված վիճակը կարող է հանգեցնել նրան, որ նա ճանաչվի անօգնական վիճակում գտնվող. սա հստակ սահմանված է թե՛

¹ ՄԱԿ-ի «Անդրազգային կազմակերպված հանցավորության դեմ» կոնվենցիան լրացնող՝ Մարդկանց, հատկապես կանանց և երեխաների առևտրի կանխարգելման, արգելման և պարժի մասին արձանագրություն («Պալերմոյի արձանագրություն»), Հոդված 3 (ա), <https://www.ohchr.org/en/instruments-mechanisms/instruments/protocol-prevent-suppress-and-punish-trafficking-persons>

² ՄԱԿ-ի «Անդրազգային կազմակերպված հանցավորության դեմ» կոնվենցիան լրացնող՝ Մարդկանց, հատկապես կանանց և երեխաների առևտրի կանխարգելման, արգելման և պարժի մասին արձանագրության («Պալերմոյի արձանագրություն») մշակման նախապատրաստական աշխատանքների արձանագրություն (Travaux Préparatoires), էջ 345, http://www.unodc.org/documents/treaties/UNTOC/Publications/Travaux%20Preparatoire/04-60074_ebook-e.pdf

«Մարդկանց թրաֆիքինգի և շահագործման ենթարկված անձանց նույնացման և աջակցության մասին» օրենքով, և թե՛ «Քրեական օրենսգրքով:

Այս կարգավորումներով պետությունը ճանաչում է, որ հոգեկան առողջության վիճակը կարող է սահմանափակել անձի կարողությունը՝ հասկանալու կամ կանխելու իր նկատմամբ կիրառվող վնասակար գործողությունները, ինչը նրան դարձնում է մարդկանց թրաֆիքինգի և շահագործման բարձր ռիսկի ենթակա: Նշված նորմերը իրավական հիմք են, որով պարտադիր է ապահովել նաև վաղ հայտնաբերման, պաշտպանության և աջակցման մեխանիզմների իրականացում, քանի որ խոցելիությունը ոչ միայն բժշկական կամ սոցիալական խնդիր է, այլև մարդու իրավունքների պաշտպանության ոլորտում առաջնահերթություն:

Ավելին, «Քրեական օրենսգրքի 189 և 190-րդ հոդվածներում օրենսդիրը հատուկ քրեաիրավական պաշտպանություն է նախատեսում ինչպես երեխաների, այնպես էլ անօգնական վիճակում գտնվող անձանց համար: Մասնավորապես, 189-րդ հոդվածով անօգնական անձի թրաֆիքինգը կամ շահագործումը դիտվում է որպես առավել ծանր հանցագործություն՝ անկախ որևէ լրացուցիչ «միջոց»-ի առկայությունից (օր.՝ ուժ, խաբեություն), քանի որ անձի հոգեկան կամ ֆիզիկական վիճակը արդեն իսկ վերացնում է իրական և ընդունելի այլընտրանք ունենալու հնարավորությունը: Այս իրավաքաղաքական մոտեցումը համահունչ է միջազգային չափանիշներին, ներառյալ Մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարի Եվրոպայի խորհրդի կոնվենցիայի և դրա Բացատրական գեկույցի «խոցելի դիրքի չարաշահման» սահմանմանը: Միաժամանակ, 190-րդ հոդվածը քրեականացնում է նաև շահագործման վիճակում գտնվող անձի ծառայություններից օգտվելը, եթե ծառայությունից օգտվողը գիտակցաբար օգտագործում է այդ խոցելիությունը, ինչը լրացուցիչ հստակեցնում է, որ ոչ միայն թրաֆիքինգ իրականացնողը, այլ նաև շահագործումից օգտվող անձը կրում է քրեական պատասխանատվություն:

«Քրեական օրենսգրքի 189-րդ հոդվածում «միջոցի» հավելյալ ապացուցման պահանջի բացակայությունը ցույց է տալիս իրավաքաղաքական կարևոր մոտեցում: Օրենսդիրը անօգնական վիճակը դիտարկում է որպես այնպիսի խոցելիություն, որը ինքնին վերացնում է կամքի ազատ ձևավորման նվազագույն պայմանները: Սա համահունչ է միջազգային մոտեցմանը, քանի որ որոշ խմբերի համար շահագործման ռիսկը կառուցվածքային է և պահանջում է ավելի բարձր մակարդակի պաշտպանություն:

Միաժամանակ, գործնականում հենց այստեղ է առաջանում կիրառման ամենաբարդ հանգույցը՝ ինչ չափանիշներով է հաստատվում անօգնական վիճակը, ում գնահատականն է վճռորոշ (դատաբժշկական եզրակացություն, սոցիալական գնահատում): Ուստի, արդյունավետ կիրառման տեսանկյունից կարևոր է իրավակիրառ մարմինների համար մշակել ուղեցույցներ:

Հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձինք միջազգային իրավակարգերում ևս դիտարկվում են որպես մարդկանց թրաֆիքինգի և

շահագործման առումով խոցելիություն ունեցող խումբ¹: Մասնավորապես, Եվրոպայի խորհրդի (ԵԽ) Մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարի փորձագետների խումբը (ԳՐԵՏԱ), որը պատասխանատու է անդամ պետությունների կողմից Մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարի մասին Եվրոպայի խորհրդի կոնվենցիայի կատարման նկատմամբ մշտադիտարկում իրականացնելու համար, իր չորրորդ գնահատողական փուլի ընթացքում առանձնահատուկ ուշադրություն է դարձնում այն խոցելիություններին, որոնք էականորեն բարձրացնում են մարդկանց թրաֆիքինգի և շահագործման ռիսկը: ԳՐԵՏԱ-ի մեկնաբանությամբ՝ խոցելիությունը պետք է դիտարկել բազմատեսակ՝ ներառելով ոչ միայն սոցիալ-տնտեսական կամ իրավական գործոններ, այլ նաև անձի առողջական վիճակը, մասնավորապես՝ հոգեկան առողջության խնդիրները և դրանց հետևանքով առաջացած մարտահրավերները:²

ԵԽ Մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարի մասին կոնվենցիայի բացատրական զեկույցի համաձայն՝ խոցելի դիրքի չարաշահումը վերաբերում է այնպիսի իրավիճակի օգտագործմանը, երբ անձը չունի իրական և ընդունելի այլընտրանք շահագործումից խուսափելու համար: ԳՐԵՏԱ-ն ընդգծում է, որ խոցելիությունը կարող է բխել ֆիզիկական կամ հոգեկան առողջության անբավարար վիճակից, ճանաչողական ունակությունների սահմանափակումներից, ճգնաժամային հոգեբանական վիճակից, ինչպես նաև առողջության հետ կապված կախվածությունից պետական ծառայություններից կամ խնամողներից: Հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց համար այս գործոնները փոխկապակցված են. տվյալ անձը կարող է ունենալ ինքնավարության ցածր մակարդակ, դժվարությամբ կողմնորոշվել վտանգների պայմաններում, ընկալել սահմանափակ այլընտրանքներ, կամ գտնվել իր նկատմամբ հոգեբանական ազդեցության ռիսկի ներքո³:

Այս համատեքստում «խոցելի դիրքի չարաշահման» առանձնահատկությունը «անտեսանելի հարկադրանքի» տրամաբանությամբ գործելն է: Փակ հաստատություններում ուժ կամ խաբեություն կիրառելուն զուգահեռ հավանական է նաև խնամքից և բուժումից անձի կախվածության չարաշահումը: Այդ

¹ Ջուլիա Պլանինցեր, Հելմուտ Ջաքս (խմբագիրներ), Մեկնաբանություն՝ Եվրոպայի խորհրդի «Մարդկանց թրաֆիքինգի դեմ գործողությունների մասին» կոնվենցիայի վերաբերյալ: Edward Elgar Publishing (Elgar Commentaries on the Council of Europe Conventions, 2020), էջ 266,

<https://library.oapen.org/handle/20.500.12657/51308>

² «Մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարի մասին» Եվրոպայի խորհրդի կոնվենցիայի իրականացման գնահատման հարցաշար. Չորրորդ գնահատողական փուլ. Թեմատիկ շեշտադրում՝ մարդկանց թրաֆիքինգի նկատմամբ խոցելիությունների հաղթահարումը», Մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարի Եվրոպայի խորհրդի փորձագետների խումբ (ԳՐԵՏԱ) (GRETA(2023)11), ընդունվել է 30 հունիսի 2023թ.,

<https://rm.coe.int/questionnaire-for-the-evaluation-of-the-implementation-of-the-council/1680abd8fa>

³ «Մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարի մասին» Եվրոպայի խորհրդի կոնվենցիայի բացատրական զեկույց», պարբերություն 83, <https://rm.coe.int/16800d3812>

կախվածությունն արդեն իսկ ստեղծում է իրավիճակ, որտեղ անձը գործնականում չունի «իրական և ընդունելի այլընտրանք»: Այսպիսով, տվյալ «միջոցը» ոչ թե կողմնակի հանգամանք է, այլ հաստատության ներսում ձևավորված կառուցվածքային պայման:

Շատ դեպքերում հոգեկան առողջության վիճակից բխող խոցելիությունը ուղեկցվում է նաև սոցիալական մեկուսացմամբ, խնամակալից կամ հաստատությունից կախվածությամբ, որոնց չարաշահումը կարող է հանգեցնել հոգեբուժական կազմակերպություններում, սոցիալական խնամքի հաստատություններում կամ այլ փակ հաստատություններում շահագործման:

Այստեղից բխում է կարևոր եզրահանգում, որ եթե «միջոցը» կառուցվածքային է, ապա դրա հասցեագրումը և խոցելիության նվազեցումը ևս ենթադրում են կառուցվածքային մոտեցում՝ վերահսկողության մեխանիզմների զարգացում, որոշումների ընդունման թափանցիկություն, ֆինանսական/գույքային հարաբերությունների հստակ կանոնակարգում: Այսպիսի մոտեցումը փոխում է պետության դիտանկյունը՝ դեպքին արձագանքելուց դեպի առավել նախաձեռնողական մոտեցում՝ այն պայմանների չեզոքացում, որոնք հոգեկան առողջության խնդիր ունեցող անձին դարձնում են խոցելի:

ԳՐԵՏԱ-ն ընդգծում է, որ նման պայմաններում շահագործումը կարող է լինել ոչ միայն տնտեսական կամ սեռական բնույթի հարկադրանք, այլև անձի հոգեկան և ֆիզիկական անձեռնմխելիության խախտում՝ ներառյալ հարկադիր աշխատանք, ֆինանսական միջոցների յուրացում, կամ ծառայությունների ապահովման պայմանների սպառնալիքներով մանիպուլյացիա: Այս համատեքստում ԳՐԵՏԱ-ն շեշտում է պետության պոզիտիվ պարտավորությունը՝ ապահովել հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց վաղ հայտնաբերում, աջակցություն, ինստիտուցիոնալ վերահսկողություն և տեղեկատվության հասանելիություն, քանի որ պաշտպանության միջոցների բացակայությունը կամ անարդյունավետությունը կարող է բերել մարդու իրավունքների կոպիտ խախտումների, այդ թվում՝ մարդկանց թրաֆիքինգի և շահագործման:

ԳՐԵՏԱ-ի շեշտադրումը, որ խոցելիությունը բազմատեսակ է, կարևոր է, որովհետև հոգեկան առողջության խնդիրները հազվադեպ են հանդես գալիս «մեկուսացված». դրանք հաճախ ուղեկցվում են աղքատությամբ, սոցիալական մեկուսացմամբ, խնամքի կախվածությամբ, ինչպես նաև տեղեկատվության/իրավական օգնության սահմանափակ հասանելիությամբ: Այս գործոնների համադրումն է, որ ստեղծում է խոցելիություն, որտեղ յուրաքանչյուր նոր գործոն ուժեղացնում է մյուսի ազդեցությունը:

Այստեղից բխում է քաղաքականության կարևոր հետևություն. եթե խոցելիությունը բազմաշերտ է, ապա համանման միջամտությունն է, որ կարող լինել արդյունավետ: Բացառապես քրեական հետապնդումը կամ սոցիալական աջակցությունը բավարար չեն: Անհրաժեշտ է մեխանիզմ, որը միևնույն ժամանակ լուծում է ինքնավարության բարձրացման, վերահսկողության, բողոքարկման հասանելիության, և հաստատությունից դուրս գալուց հետո ծառայությունների շարունակականության ապահովման խնդիրները:

ՍԱՀՄԱՆԱՐԴՈՎԱԿԱՆ ՂԱՏԱՐԱՆ ◆ ՏԵՂԵԿՎԱԳԻՐ ◆ 4(121)2025

Մարդկանց թրաֆիքինգ իրականացնող անձինք չարաշահում են զոհերի խոցելի դիրքը՝ օգտագործելով այդ անձանց որոշում կայացնելու ունակության սահմանափակումները, ճանաչողական և հոգեկան առողջության խնդիրները, մտավոր և ֆիզիկական խնդիրներով հաշմանդամությունը, ինչպես նաև նրանց սոցիալական մեկուսացումն ու կախվածությունը խնամքից: Մի շարք փաստերով հաստատվել են դեպքեր, երբ շահագործողները յուրացրել են նման անձանց կամ նրանց խնամողների համար նախատեսված պետական նպաստներն ու սոցիալական վճարումները¹ խորացնելով նրանց կախվածության և վերահսկելիության աստիճանը²:

Շահագործումը կարող է իրականացվել անձնակազմի կողմից, որը չարաշահում է իր պաշտոնեական դիրքը՝ պարտադրելով հարկադիր աշխատանք, յուրացնելով իրավունք ունեցող անձանց եկամուտները կամ թոշակները, կամ նույնիսկ մոլորեցնելով իրավասու դատարաններին, որպեսզի ստանա խնամքի իրավասություն և հետագայում շահագործի տվյալ անձանց: Միևնույն ժամանակ, հաստատության ներսում ձևավորված հիերարխիկ հարաբերությունները հաճախ հանգեցնում են նրան, որ ֆիզիկապես կամ հոգեբանական առումով առավել ուժեղ բնակիչները շահագործում են առավել խոցելիներին՝ անձնակազմի անգործության կամ պատշաճ միջամտության բացակայության պայմաններում:

Այս երևույթները հանգեցնում են մարդու հիմնարար իրավունքների բազմակողմանի խախտման՝ ներառյալ արժանապատվության, անձնական ազատության, շահագործումից և մարդկանց թրաֆիքինգից պաշտպանության իրավունքների: ՀՀ միջազգային պարտավորությունները ենթադրում են կանխել այդպիսի իրավիճակները և ստեղծել պաշտպանության արդյունավետ համակարգեր՝ ապահովելով համապատասխան վերահսկողություն, բողոքարկման հասանելի մեխանիզմներ, շահագործման դեպքերի վաղ հայտնաբերում, անմիջական պաշտպանություն և վերականգնում: Այդ պատճառով խիստ անհրաժեշտ է ապահովել փակ հաստատությունների անկախ, կանոնավոր և թափանցիկ մշտադիտարկում, ինչպես նաև համապատասխան իրավապահ և վերահսկողական մարմինների գործառույթների արդյունավետ իրականացում:

Հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձինք հանդիսանում են մարդկանց թրաֆիքինգի և շահագործման առումով գերազանցապես խոցելի

¹ «Մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարի մասին Եվրոպայի խորհրդի կոնվենցիայի իրականացման վերաբերյալ զեկույց. Չորրորդ գնահատողական փուլ. Ռումինիա», Մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարի Եվրոպայի խորհրդի փորձագետների խումբ (ԳՐԵՏՍ) (GRETA(2025)13), ընդունված՝ 2 հուլիսի 2025 թ., հրապարակված՝ 12 նոյեմբերի 2025 թ., էջեր 27–30, <https://rm.coe.int/greto-2025-13-fgr-rom-en/488029496a>

² «Հենարաններ, խաչմերուկներ և ելքի ուղիներ. ճանապարհային քարտեզ համակարգերի և արդյունաբերական ոլորտների համար՝ մարդկանց թրաֆիքինգը կանխելու և խաթարելու նպատակով. Առողջապահություն», Polaris (հուլիս 2018 թ.), էջ 21,

<https://polarisproject.org/wp-content/uploads/2018/08/A-Roadmap-for-Systems-and-Industries-to-Prevent-and-Disrupt-Human-Trafficking-Health-Care.pdf>

խմբերից մեկը, և ՀՀ օրենսդրությունը, միջազգային իրավական փաստաթղթերը և մոնիթորինգային մարմինները (հատկապես ԳՐԵՏԱ-ն) հստակ ճանաչում են այդ խոցելիությունը: Հոգեկան առողջության վիճակից բխող ինքնավարության սահմանափակումը, սոցիալական մեկուսացումը, խնամքից կամ հաստատությունից կախվածությունը կարող են հանգեցնել նրան, որ անձը չի կարողանում կանխել իր նկատմամբ իրականացվող վնասակար գործողությունները:

Այս համատեքստում հոգեբուժական և սոցիալական խնամքի հաստատությունները բարձր ռիսկային միջավայր են, որտեղ խնամքի և վերահսկողության անվան տակ կարող են տեղի ունենալ շահագործման տարբեր ձևեր, այդ թվում՝ հարկադիր աշխատանք, ֆինանսական շահագործում, ազդեցության գործադրում և իրավազոր մարմինների մոլորեցում: Հոգեբուժական կազմակերպությունները բարձր ռիսկային միջավայր են ոչ միայն փակ լինելու պատճառով, այլ որովհետև այդ պայմաններում միաժամանակ համընկնում են երեք գործոն՝ անձի ինքնավարության նվազում, որոշումների ընդունման գործընթացների «միջնորդավորվածություն» (բուժանձնակազմ, խնամակալ, վարչակազմ), և սահմանափակ արտաքին վերահսկողություն: Այս համադրման հետևանքով անձնական ազատության իրավունքը դառնում է ոչ թե առանձին խախտման օբյեկտ, այլև՝ խոցելիության պատճառ, որը կարող է նպաստել այլ իրավունքների խախտմանը՝ ներառյալ շահագործման ռիսկերին:

Թեպետ ՀՀ իրավական համակարգը քրեականացնում է ինչպես խոցելի անձանց թրաֆիքինգը, այնպես էլ շահագործման վիճակում գտնվող անձանց ծառայություններից օգտվելը, առկա են գործնական իրականացման բացեր, այդ թվում՝ կարողությունների զարգացման անհրաժեշտություն, վերահսկողության անբավարարություն, բողոքարկման ոչ արդյունավետ մեխանիզմներ, անորոշ պատասխանատվության համակարգ և մասնագիտական կարողությունների պակաս:

Այդուամենայնիվ, մարդկանց թրաֆիքինգի և շահագործման կանխարգելման հարցը միայն քրեաիրավական տիրույթում չէ, այլ նաև՝ մարդու իրավունքների ապահովման պոզիտիվ պարտավորությունների: Այն ենթադրում է պետության կողմից արդյունավետ իրավական կառուցակարգերի մշակում, իրավասու անձանց կարողությունների զարգացում և հետևողական վերահսկողություն: Ուստի, համակարգային մարտահրավեր չեն կարող դիտվել անհատական թերությունները, այլ նշված կառուցակարգերի բացակայությունը կամ արդյունավետության խնդիրը:

Վերոգրյալի հաշվառմամբ առաջարկվում է, որ պետության՝ հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց թրաֆիքինգից և շահագործումից պաշտպանության քաղաքականության հիմքում լինի ոչ միայն քրեաիրավական արձագանքը, այլ, նախևառաջ, կանխարգելիչ շրջանակը՝ ուղղված խոցելիության նվազեցմանը: Այդ նպատակով անհրաժեշտ է օրենսդրական և ինստիտուցիոնալ բարեփոխումների միջոցով հստակ սահմանել պետական պատասխանատվության բաշխումը, ներդնել ռիսկերի գնահատման միասնական գործիքակազմ և ապահովել համակարգային համագործակցություն առողջապահության, սոցիալական պաշտպանության, իրավապահ մարմինների և քաղաքացիական հասարակության միջև:

ՍԱՀՄԱՆԱՐԴՎԱԿԱՆ ՂԱՏԱՐԱՆ ◆ ՏԵՂԵԿՎԱԳԻՐ ◆ 4(121)2025

Արդյունավետ պաշտպանության հիմնական բաղադրիչը նաև վաղ հայտնաբերման և ուղղորդման մեխանիզմների սահմանումն է: Ուստի, առաջարկում ենք մշակվել և հաստատությունների մակարդակում ներդնել մարդկանց թրաֆիքինգի և շահագործման դեպքերի ցուցիչներ, որոնք կապահովեն մասնագետի կողմից իրավիճակի ճանաչումն ու արագ արձագանքը¹:

Հոգեբուժական և սոցիալական խնամքի ինստիտուցիոնալ մոդելների փոփոխությունն ամբողջության համար կարևոր է: Կարևոր է, որպեսզի պետությունը զարգացնի համայնքային ծառայությունների ձևաչափեր, որոնք կնվազեցնեն փակ հաստատությունների անհրաժեշտությունը: Այս քաղաքականությունը կկրճատի այն գործոնները, որոնք հանգեցնում են մեկուսացման, վերահսկողության և բացահայտ կամ թաքնված շահագործման վտանգների: Համայնքային խնամքի ընդլայնումը միաժամանակ կբարձրացնի հասարակության տեղեկացվածությունն ու ներառականության մակարդակը:

Տվյալների վրա հիմնված քաղաքականության մշակման համար անհրաժեշտ է զարգացնել մարդկանց թրաֆիքինգի և շահագործման դեպքերի ու ռիսկերի վերաբերյալ տվյալների հավաքագրման և վերլուծության միասնական պետական համակարգը: Հետևաբար, առաջարկում ենք, որ մարդկանց թրաֆիքինգի և շահագործման վերաբերյալ տեղեկատվությունը ներառի ոչ միայն ընդհանուր ցուցիչներ, այլ հստակ առանձնացված տվյալներ «անօգնական վիճակում գտնվող» անձանց վերաբերյալ, ներառյալ այն հանգամանքը, որ այդ վիճակը կարող է բխել հոգեկան առողջության խնդիրներից: Այս տեղեկության համակարգված ամրագրումը կերաշխավորի խոցելիության առանձնահատկությունների համապարփակ գնահատումը, թույլ կտա ձևակերպել հիմնավոր միջամտություններ:

Հոգեկան առողջության խնդիր ունեցող անձանց թրաֆիքինգի և շահագործման վտանգները հոգեբուժական կազմակերպություններում

Հոգեբուժական կազմակերպությունները և սոցիալական խնամքի հաստատությունները հատուկ միջավայր են, որտեղ հոգեկան առողջության խնդիր ունեցող անձանց իրավունքների պաշտպանությունը կարող է էապես վտանգվել՝ հաշվի առնելով փակ հաստատությանը բնորոշ առանձնահատկությունները և այնտեղ պահվող անձանց ինքնավարության մակարդակը: Խոցելի դիրքի չարաշահումն այս համատեքստում արտահայտվում է նրանով, որ անձի վիճակն օգտագործվում է շահագործման գործողություններ կատարելու համար, որի արդյունքում անձը չունի իրական և ընդունելի այլընտրանք, բացի չարաշահմանը ենթարկվելուց:

Փակ հաստատություններում հոգեկան առողջության խնդիր ունեցող անձանց նկատմամբ չարաշահումների կամ շահագործման ռիսկն ունի առնվազն երեք

¹ «Մարդկանց թրաֆիքինգի և շահագործման ենթարկված անձանց հայտնաբերումը և ուղղորդումը՝ որպես մարդու իրավունքների պաշտպանության երաշխիք», ԴԱՏԱԿԱՆ իշխանություն, Սերգեյ Ղազինյան (2025 թ.), <http://ajra.am/hy/news/640>

դրսևորում. առաջին՝ վերևից ներքև (անձնակազմը/վարչակազմը՝ իր պաշտոնեական լիազորություններով), երկրորդ՝ հորիզոնական (ազատությունից զրկված անձանց միջև՝ հիերարխիայի ու անպատժելիության, վերահսկողության խնդիրների պայմաններում), և երրորդ՝ արտաքին միջամտությամբ (խնամակալ/այլ անձ՝ ֆինանսական շահ ստանալու նպատակով): Այս տիպաբանությունը կարևոր է, որովհետև յուրաքանչյուր դրսևորում պահանջում է տարբեր կանխարգելիչ գործիքներ՝ վերահսկողություն, անվտանգ հաղորդման ուղիներ, ֆինանսների պաշտպանություն, խնամակալության վերահսկում:

Այս տեսանկյունից շահագործումը չպետք է դիտարկել միայն որպես հանցանք, այլ որպես հաստատության կառավարման որակի և մարդու իրավունքների պաշտպանության մակարդակի ցուցիչ: Երբ հաստատությունը չունի դիսկերի կառավարում, բողոքների ներկայացման արդյունավետ մեխանիզմ և անկախ մշտադիտարկում, այն դառնում է միջավայր, որտեղ նման երևույթների վտանգը բարձր է:

Տարբեր երկրների փորձը ցույց է տալիս, որ հաստատություններում աշխատող անձնակազմի կամ ղեկավարության կողմից հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց շահագործումը հնարավոր է: Շահագործման ձևերը ներառում են ստիպելը կատարել չվճարվող աշխատանք (օրինակ՝ անձնակազմի պարտականությունները), ինչպես նաև նրանց կենսաթոշակների կամ նպաստների ապօրինի յուրացումը: Այս դեպքերում անձնակազմը չարաշահում է իր իշխանական դիրքը և անձի կախվածությունը հաստատությունից¹:

Իբրև համեմատություն՝ քրեակատարողական հիմնարկներում մարդկանց թրաֆիքինգի և շահագործման վտանգները բխում են դրանց փակ միջավայրին բնորոշ խնդիրներից, որոնք նույն կերպ դրսևորվում են ինչպես բանտերում, այնպես էլ հոգեբուժական կազմակերպություններում և սոցիալական խնամքի հաստատություններում: Այս դիսկը հատկապես կապված է անձնակազմի կամ վարչակազմի կողմից իրենց ծառայողական դիրքից կամ լիազորություններից բխող ազդեցության չարաշահման հետ, ինչը դիտարկվում է որպես պետության պարտավորությունների ձախողում և մարդու իրավունքների կոպիտ խախտում: Նման շահագործումը կարող է դրսևորվել թե՛ դատապարտյալներին կամ բնակիչներին (ներառյալ հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց) հարկադիր, չվճարվող աշխատանքի ներգրավմամբ, թե՛ կոռուպցիոն գործունեության միջոցով նրանց սոցիալական նպաստների կամ այլ միջոցների յուրացմամբ: Այս խնդիրը սրվում է, երբ առկա են խոցելիության լրացուցիչ

¹ «Մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարի մասին Եվրոպայի խորհրդի կոնվենցիայի իրականացման վերաբերյալ զեկույց. Չորրորդ գնահատողական փուլ. Ռումինիա», Մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարի Եվրոպայի խորհրդի փորձագետների խումբ (ԳՐԵՏԱ) (GRETA(2025)13), ընդունված՝ 2 հուլիսի 2025 թ., հրատարակված՝ 12 նոյեմբերի 2025 թ., էջեր 27–30, <https://rm.coe.int/greta-2025-13-fgr-rom-en/488029496a>

գործոններ, ինչպես օրինակ՝ հոգեկան առողջության խնդիրները, որոնք անձին դարձնում են «ավելի թիրախային» շահագործման համար¹:

Ավելին, հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց նկատմամբ կիրառվող իրավական մեխանիզմները, հատկապես գործունակությունից զրկելը և ոչ հոժարակամ հոսպիտալացումը, լրջագույնս վտանգում են նրանց ինքնորոշման և ազատության իրավունքները: Հարկ է նկատել նաև, որ «Հոգեբուժական օգնության և սպասարկման մասին» օրենքով սահմանված ոչ հոժարակամ հոսպիտալացումը դիտարկվում է որպես միջամտության ամենազգայուն և մարդու իրավունքների պաշտպանության տեսանկյունից ամենախնդրահարույց միջոցներից մեկը: Չնայած ՀՀ Քաղաքացիական դատավարության օրենսգրքով նախատեսված ընթացակարգային երաշխիքներին (օրինակ՝ դատական լուսններին անձի պարտադիր մասնակցությունը), առկա են մտահոգություններ առ այն, որ ոչ հոժարակամ հոսպիտալացման վերաբերյալ դատական որոշումները կարող են չհամապատասխանել համաչափության սկզբունքին²:

Այս տեսանկյունից հարկ է նկատել, որ ԵՄ Խոշտանգումների և անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի կանխարգելման եվրոպական կոմիտեի (ԽԿԿ) մտահոգությունն այն է, որ Հայաստանի օրենսդրությունը դեռևս չի պահանջում պարբերաբար դատական վերանայում այն անձանց շարունակական տեղավորման անհրաժեշտության համար, ովքեր տեղավորվել են սոցիալական խնամքի հաստատություններում իրենց կամքին հակառակ: Մարդու ազատության իրավունքի տեսանկյունից ցանկացած նման տեղավորում պետք է ենթարկվի դատական վերահսկողության³:

Միացյալ Թագավորությունում հոգեբուժական համակարգում չարաշահումների և խնամակալության հետ կապված շահերի բախման ռիսկերը կարգավորվում են հիմնականում «Գործունակության մասին» 2005 թվականի օրենքով («Mental Capacity Act 2005»): Օրենքը հիմնված է այն կանխավարկածի վրա, որ յուրաքանչյուր անձ համարվում է գործունակ, եթե հակառակը ապացուցված չէ, և նախատեսում է խիստ երաշխիքներ՝ անձի փոխարեն որոշումներ կայացնելիս: Օրենքով սահմանված է, որ ցանկացած միջամտություն պետք է իրականացվի անձի լավագույն շահերից ելնելով և լինի համաչափ: Բացի այդ, ստեղծված է հատուկ դատական մարմին՝ Պաշտպանության դատարանը («Court of Protection»), որը վերահսկում է խնամակալների գործողությունները և

¹ «Մարդկանց թրաֆիքինգի և շահագործման դեմ պայքարը և զոհերի իրավունքների պաշտպանությունը քրեակարարական համակարգում»: Բանբեր Երևանի պետական համալսարանի. Իրավագիտություն, Սերգեյ Ղազինյան (2025 թ.), <https://journals.ysu.am/index.php/bulletin-ysu-jurisprudence/article/view/12997>

² «Հոգեբուժական կազմակերպություններում ոչ հոժարակամ հոսպիտալացման և բուժման մասով ազգային օրենսդրության և գործելակերպի վերաբերյալ զեկույց՝ հափուկ ուշադրություն դարձնելով ընթացակարգային երաշխիքներին», Սերգեյ Ղազինյան (2024), <https://rm.coe.int/report-on-involuntary-treatment/native/4880297b92>

³ ԵՄ Խոշտանգումների և անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի կանխարգելման եվրոպական կոմիտեի (ԽԿԿ) զեկույցը Հայաստանի վերաբերյալ, (2024թ.), էջեր 44-45, <https://rm.coe.int/1680b257b2>

քննության է առնում շահերի բախման կամ չարաշահման դեպքերը, այդ թվում՝ հոգեբուժական հաստատություններում¹:

Հոգեկան առողջության խնդիր ունեցող անձի գործունակության սահմանափակումը, որը ներպետական օրենսդրությամբ նախատեսում է գործունակությունից բացառապես ամբողջությամբ զրկելու հնարավորություն, լրացուցիչ վտանգ է նրա խոցելի դիրքի չարաշահման համար: Բացի այդ, միջազգային չափանիշները, այդ թվում՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքը, ընդգծում են, որ գործունակությունից զրկելը պետք է դիտարկվի որպես ծայրահեղ միջոց, մինչդեռ օրենսդրական դաշտը պետք է ապահովի գործունակության աստիճանի ավելի ճկուն սահմանափակումներ²:

ԽԿԿ-ն, թեև Հայաստանի վերաբերյալ իր վերջին զեկույցում չի արձանագրել անձնակազմի կողմից հոգեբուժական կազմակերպություններում և սոցիալական խնամքի հաստատություններում պահվող անձանց թրաֆիքինգի կամ շահագործման հավաստի պնդումներ, սակայն մտահոգություններ է բարձրացրել կապված այլ դրսևորումների հետ: Մասնավորապես, այն արձանագրել է, որ Հայաստանի օրենսդրությունը դեռևս նախատեսում է, որ գործունակությունից զրկված անձը, որը տեղավորվում է սոցիալական խնամքի հաստատությունում, այդ հաստատությունը մեխանիկորեն դառնում է նրա օրինական խնամակալը: Այս մոտեցումը հնարավոր է նաև այն դեպքում, երբ գործունակությունից զրկված անձը հոժարական կամ ոչ հոժարական տեղավորվում է հոգեբուժական կազմակերպությունում: ԽԿԿ-ն մտահոգություն է հայտնել, որ այս դրույթը հեշտությամբ կարող է հանգեցնել շահերի բախման, քանի որ խնամակալի դերն է պաշտպանել անձի իրավունքները հենց այն հաստատության դեմ, որտեղ նա գտնվում է³:

Զեխիայի օրինակով իրականացված մարդու իրավունքների միջազգային ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ երբ հոգեբուժական կամ սոցիալական խնամքի հաստատությունները ավտոմատ կերպով ստանձնում են խնամակալի դեր, դա գործնականում զրկում է անձին արդյունավետ պաշտպանության հնարավորությունից: Զեկույցները փաստում են, որ նման համակարգերում խնամակալները հաճախ չեն վիճարկում անձի հոսպիտալացման կամ հաստատությունում մնալու որոշումները, ինչը խորացնում է մեկուսացումը և շահագործման վտանգը: Այս փորձը հաճախ օգտագործվում է որպես բացասական

¹ «Գործունակության մասին» Միացյալ Թագավորության օրենք (2005թ.), <https://www.legislation.gov.uk/ukpga/2005/9/contents>

² «Հոգեկան առողջության խնդիր ունեցող անձանց գործունակության սահմանափակման վերաբերյալ ներպետական իրավական դաշտի և գործնական կիրառման վերլուծություն. «Նիկոլյանն ընդդեմ Հայաստանի» գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վճիռը կարարում», Սերգեյ Ղազինյան (2024), <https://rm.coe.int/execution-of-ecthr-judgement-nikolyan-vs-armenia-armenian-1-1-/native/1680b20c05>

³ Եկս Խոշրանգումների և անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պարժի կանխարգելման եվրոպական կոմիտեի (ԽԿԿ) զեկույցը Հայաստանի վերաբերյալ, (2024 թ.), էջեր 44-45, <https://rm.coe.int/1680b257b2>

օրինակ՝ այլ երկրների համար բարեփոխումների անհրաժեշտությունը հիմնավորելիս¹:

Համակարգային թերություններից է նաև այն, որ խնամակալության մարմինները հաճախ գործում են հասարակական հիմունքներով (*pro bono*) և չունեն բավարար կարողություններ՝ պատշաճ վերահսկողություն իրականացնելու կամ շահերի բախման ռիսկերը ուսումնասիրելու համար: Սա բարձրացնում է հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց շահագործման ենթարկվելու հավանականությունը: *Նիկոլյանն ընդդեմ Հայաստանի* վճռի դիտարկումներն ընդգծեցին այս խնդիրը, որտեղ դատարանը դիմումատուի որդուն նշանակել էր խնամակալ՝ չնայած նրանց միջև առկա կոնֆլիկտային հարաբերություններին, և այն բանին, որ որդին, ըստ երևույթին, չէր գործել հոր լավագույն շահերից ելնելով: Այդպիսով, եթե խնամակալը գտնվում է շահերի բախման մեջ կամ հրաժարվում է պաշտպանել խնամարկյալի իրավունքները (օրինակ՝ դատարան դիմելու կամ նրա գործունակության վերականգնման պահանջով), հոգեկան առողջության խնդիր ունեցող անձը փաստացի զրկվում է դատական պաշտպանությունից: Այս ինստիտուցիոնալ անհամապատասխանությունը դարձնում է հոգեկան առողջության խնդիր ունեցող անձին ավելի խոցելի՝ ենթարկվելու շահագործման կամ այլ չարաշահումների:

Եվրոպական մի շարք երկրներում՝ Գերմանիայում, Շվեդիայում, Չեխիայում, իրականացվել են օրենսդրական բարեփոխումներ՝ ուղղված խնամակալության սահմանափակմանը և անձի ինքնավարության առավելագույն պահպանմանը: Եվրոպական խորհրդարանի պատվերով իրականացված ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ այնտեղ, որտեղ պահպանվում է լիակատար խնամակալության ինստիտուտը առանց պարբերական դատական վերանայման, հոգեբուժական հաստատություններում չարաշահումների և շահագործման ռիսկերը զգալիորեն բարձր են: Այդ իսկ պատճառով ԵՄ մակարդակում խրախուսվում են մոդելներ, որոնք նախատեսում են խնամակալության ժամանակավոր բնույթ, պարբերական վերանայում և անկախ վերահսկողություն²:

Այս համակարգային թերությունները հատկապես վտանգավոր են բժշկական և սոցիալական խնամքի համատեքստում: Խնամակալության մարմինների ներկայացուցչությունը դատական վարույթներում, ինչպես օրինակ՝ ոչ

¹ «Խնամակալությունը և մարդու իրավունքները Չեխիայի Հանրապետությունում. իրավունքի և քաղաքականության վերլուծություն» *Mental Disability Advocacy Center (MDAC) (2011 թ.)*, https://www.mdac.org/sites/mdac.info/files/English_Guardianship_and_Human_Rights_in_the_Czech_Republic.pdf

² Եվրոպական խորհրդարան, *Ներքին քաղաքականությունների գլխավոր վարչություն, Քաղաքացիական իրավունքների և սահմանադրական հարցերի քաղաքականության բաժին (2008 թ.)*: *Իրավունակություն չունեցող չափահասների պաշտպանության իրավական համակարգերի համեմատական ուսումնասիրություն. մասնավոր իրավունքի, մասնավոր միջազգային իրավունքի ազգային կանոններ և Եվրոպական միության հնարավոր օրենսդրական նախաձեռնություն (Միացյալ Թագավորություն, Ֆրանսիա, Գերմանիա, Շվեդիա, Չեխիայի Հանրապետություն, Ռումինիա) (2008 թ.)*, https://www.europarl.europa.eu/RegData/etudes/STUD/2008/408328/IPOL-IURI_ET%282008%29408328_EN.pdf

հոժարական հոսպիտալացման հարցով, հաճախ կրում է ձևական բնույթ, քանի որ նրանք բացառիկ դեպքերում են առարկում հոգեբուժական կազմակերպության ներկայացրած հայցերին կամ չեն կարողանում ներկայացնել խնամարկյալի կենսապայմանների վերաբերյալ անհրաժեշտ տեղեկություններ: Ավելին, արձանագրվել են դեպքեր, երբ խնամակալները առարկում են անձի դուրսգրմանը հոգեբուժական կազմակերպությունից նույնիսկ այն բանից հետո, երբ հոգեբուժական հանձնաժողովը եզրակացնում է, որ անձն այլևս ստացիոնար բուժման կարիք չունի:

Այս իրավիճակը կարող է հանգեցնել անձի՝ անազատության մեջ անհիմն պահելուն: Ուստի, անհրաժեշտ է ուժեղացնել խնամակալության մարմինների մասնագիտական կարողությունները, որպեսզի ապահովվի հոգեկան առողջության խնդիր ունեցող անձանց իրավունքների գործուն և արդյունավետ պաշտպանությունը¹:

Ոչ հոժարական հոսպիտալացման ընթացակարգի և դրա հետ կապված երաշխիքների տրամադրման շրջանակում անհրաժեշտ է քննարկել գործունակությունից զրկված անձանց հոսպիտալացման հարցը: «Հոգեբուժական օգնության և սպասարկման մասին» օրենքի համաձայն՝ երեխայի կամ օրենքով սահմանված կարգով անգործունակ ճանաչված անձի հոգեբուժական օգնությունը և սպասարկումը (այդ թվում՝ ստացիոնար) իրականացնելիս նրա կարծիքն ամրագրելը պարտադիր է: Այնուամենայնիվ, օրինական ներկայացուցչի հետ նույնական դիրքորոշում չունենալու պարագայում (երբ անչափահասը կամ անգործունակ ճանաչված անձը չի ցանկանում հետազոտման կամ բուժման նպատակով գտնվել հոգեբուժարանում, իսկ օրինական ներկայացուցչիչը պնդում է բուժման անհրաժեշտությունը) անձի կարծիքը իրավական որևէ հետևանք չի առաջացնում, և անձը պահվում է հոգեբուժական կազմակերպությունում՝ իր կամքին հակառակ: Այսպիսով, գործունակությունից զրկված անձի և իր օրինական ներկայացուցչի միջև անհամաձայնության պարագայում ոչ հոժարական բուժման ընթացակարգ նախաձեռնելու կառուցակարգեր օրենսդրությամբ նախատեսված չեն, ինչը սահմանափակում է ոչ միայն տվյալ անձի՝ դատարանի կողմից լսվելու իրավունքը, այլ նաև փաստացի զրկում է ազատությունից՝ նրան ոչ հոժարական հոսպիտալացնելով հոգեբուժական կազմակերպությունում²:

Ավելին, օրենսդրությունն արձանագրում է՝ հոգեկան առողջության խնդիրներով պայմանավորված վիճակը կարող է անձին դարձնել

¹ «Հոգեկան առողջության խնդիր ունեցող անձանց գործունակության սահմանափակման վերաբերյալ ներպետական իրավական դաշտի և գործնական կիրառման վերլուծություն. Նիկոլյանն ընդդեմ Հայաստանի գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վճռի կարարում», Սերգեյ Ղազինյան (2024), <https://rm.coe.int/execution-of-ecthr-judgement-nikolyan-vs-armenia-armenian-1-1-/native/1680b20c05>

² «Հոգեբուժական կազմակերպություններում ոչ հոժարական հոսպիտալացման և բուժման մասով ազգային օրենսդրության և գործելակերպի վերաբերյալ զեկույց՝ հալոուկ ուշադրություն դարձնելով ընթացակարգային երաշխիքներին», Սերգեյ Ղազինյան (2024), էջեր 25-26, <https://rm.coe.int/report-on-involuntary-treatment/native/4880297b92>

անօգնական/խոցելի: Սակայն «ճանաչումից» դեպի «պաշտպանություն» անցումը պահանջում է միջանկյալ օղակներ՝ վաղ հայտնաբերման ցուցիչներ, ուղղորդման ընթացակարգեր, ծառայությունների հասանելիություն և վերահսկողության արդյունավետություն: Առանց այս օղակների իրավական ճանաչումը կարող է գործել միայն որպես քրեաիրավական արձագանքի, բայց ոչ որպես կանխարգելման և պաշտպանական համակարգի հիմք:

Սա նաև ենթադրում է, որ պետության պարտավորությունը չի սահմանափակվում օրենսդրական կարգավորում սահմանելով: Մարդու իրավունքների պաշտպանությունը պահանջում է գործնական կարողություն՝ կանխարգելելու «ռիսկի իրագործումը»: Ուստի, պետությունից ակնկալվում է «պատշաճ ջանասիրություն» («due diligence») գործնականում կանխելու խոցելիության չարաշահումը:

Միջազգային համեմատական ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ մի շարք երկրներ՝ ներառյալ Անգլիան և Ուելսը, Կանադան, Ավստրալիան (Վիկտորիա նահանգ) և Հյուսիսային Իռլանդիան, աստիճանաբար անցում են կատարում լիակատար խնամակալության մոդելից դեպի աջակցված որոշում կայացնելու համակարգեր: Այս մոտեցումը նպատակ ունի նվազեցնել այն իրավիճակները, երբ անձի խոցելիությունը ինստիտուցիոնալ կերպով ամրապնդվում է և կարող է օգտագործվել շահագործման համար: Ուսումնասիրությունները նաև արձանագրում են, որ հոգեբուժական հաստատություններում չարաշահումների ռիսկը զգալիորեն նվազում է այն համակարգերում, որտեղ առկա են անկախ վերահսկողության և բողոքարկման գործուն մեխանիզմներ¹:

Զուգահեռաբար անհրաժեշտ է ուժեղացնել անկախ մշտադիտարկման մեխանիզմները՝ հաստատություններում մարդու իրավունքների իրավիճակի պարբերական ուսումնասիրությամբ: Սա ենթադրում է արտաքին վերահսկողության մարմինների անարգել մուտք, հաշվետվությունների հրապարակայնություն և արձանագրված խախտումների նկատմամբ պատասխանատվության անշեղ կիրառում: Մշտադիտարկումը պետք է ներառի ոչ միայն իրավական, այլ նաև էթիկական և հոգեբուժական չափանիշներ՝ անձի արժանապատվության, ազատ կամքի և ինքնավարության պահպանումը դիտարկելով որպես առանցքային իրավունքներ:

Մարդկանց թրաֆիքինգի և շահագործման դեմ պայքարի արդյունավետությունը և իրավունքահեն մոտեցման երաշխավորումը կախված է անկախ մշտադիտարկումից և մասնագիտացված մարմինների առկայությունից: ԳՐԵՏԱ-ն շեշտում է, որ գործառնական և մշտադիտարկման գործառույթների միջև պետք է լինի կառուցվածքային տարանջատում, որպեսզի ապահովվի պետական հաստատությունների կողմից մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարի ջանքերի օբյեկտիվ

¹ Հոգեկան առողջության ծառայություններում աջակցված և փոխարինող որոշումների կայացման իրավական շրջանակների միջազգային համեմատական վերլուծություն, Դեյվիդսոն, Գ., Բրոֆի, Լ., Քեմփբել, Ջ., Ֆարել, Ս. Ջ., Գուդինգ, Պ., Օ'Բրայեն, Ա.-Մ. (2016թ.), <https://pubmed.ncbi.nlm.nih.gov/26318975/>

գնահատում: Հայաստանը, ըստ ԳՐԵՏԱ-ի զեկույցի, չի նշանակել Ազգային զեկուցող կամ համարժեք մարմին՝ մշտադիտարկման հստակ մանդատով:

Հայաստանում Մարդու իրավունքների պաշտպանին է վերապահված «Խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի դեմ» ՄԱԿ-ի՝ 1984 թվականի կոնվենցիայի 2002 թվականի դեկտեմբերի 18-ին ընդունված կամընտիր արձանագրությամբ սահմանված կանխարգելման ազգային մեխանիզմի կարգավիճակը: Պաշտպանն իրականացնում է «Երեխայի իրավունքների մասին» ՄԱԿ-ի՝ 1989 թվականի նոյեմբերի 20-ին ընդունված կոնվենցիայի և «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» ՄԱԿ-ի՝ 2006 թվականի դեկտեմբերի 13-ին ընդունված կոնվենցիայի դրույթների կիրառության մշտադիտարկում:

Այս մարմինը, իր անկախության սկզբունքներին համապատասխան, կարող է արդյունավետորեն ծառայել որպես մշտադիտարկման մեխանիզմ հոգեկան առողջության խնդիր ունեցող անձանց թրաֆիքինգի և շահագործման դեպքերի բացահայտմանը: Այդուամենայնիվ, մասնագիտական գնահատման և բավարար ռեսուրսների առկայության տեսանկյունից կարևոր է դիտարկել ԵԽ մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարի մասին կոնվենցիայով նախատեսված ազգային զեկուցողի մանդատի վերապահումը Մարդու իրավունքների պաշտպանին:

Վերոգրյալի հաշվառմամբ, հոգեկան առողջության խնդիր ունեցող անձանց թրաֆիքինգի և շահագործման ռիսկերի նվազեցման համար անհրաժեշտ է իրականացնել օրենսդրական փոփոխություններ: Մասնավորապես, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 37-րդ հոդվածում ամրագրել, որ որևէ հոգեբուժական կամ սոցիալական խնամքի հաստատություն, ինչպես նաև դրանց աշխատակիցները, չեն կարող հանդես գալ որպես այդ հաստատությունում գտնվող գործունակությունից զրկված անձի կամ երեխայի խնամակալ: Խնամակալության այդ ձևը պետք է արգելվի օրենքով՝ որպես շահերի ակնհայտ բախում, քանի որ հաստատությունն ունի վերահսկողություն, սահմանափակող և տնտեսական շահեր, որոնք կարող են հանգեցնել շահագործման: Պետությունը պետք է հաստատի անկախ խնամակալության ծառայություն՝ պատրաստված և վերահսկվող մասնագետներով, որոնք հանդես կգան բացառապես խնամարկյալի շահերին համապատասխան:

Կարևոր է սահմանել միատեսակ, պարտադիր ռիսկերի գնահատման մեխանիզմ բոլոր հոգեբուժական կազմակերպությունների և սոցիալական խնամքի հաստատությունների համար: Այս մեխանիզմները պետք է ներառեն ռիսկերի առաջացման, շահագործման նշանների, գումարային և նյութական միջոցների վերահսկման, իրավունքների սահմանափակման և անձի կամքին հակառակ պահման գնահատում՝ յուրաքանչյուր նոր ընդունման, միջադեպի կամ բուժման շարունակման ժամանակ: Արձանագրությունները պետք է պարտադիր լրացվեն և ենթարկվեն անկախ և մասնագիտական մշտադիտարկման:

Չարաշահումների հիմքում հաճախ ընկած է նաև ոչ հոժարական հոսպիտալացման ընթացակարգի թերի իրավակարգավորումը: Անհրաժեշտ է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 35-րդ գլխում և «Հոգեբուժական օգնության և

ՍԱՀՄԱՆԱՐԴՎԱԿԱՆ ՂԱՏԱՐԱՆ
◆ ՏԵՂԵԿՎԱԿԻՐ
◆ 4(121)2025

սպասարկման մասին» ՀՀ օրենքի 22-րդ և 24-րդ հոդվածներում ամրագրել պարտադիր պահանջ, որ ոչ հոժարակամ հոսպիտալացման վերաբերյալ գործունակությունից զրկված անձի և խնամակալի չհամընկնող կարծիքների դեպքում նախաձեռնվում է ոչ հոժարակամ հոսպիտալացման ենթարկելու ընթացակարգ: Մասնավորապես, անհրաժեշտության դեպքում, այն հոգեբուժական կազմակերպության գործադիր մարմինը, որում գտնվում կամ բուժվում է անձը, դատարան է ներկայացնում դիմում նրան հոգեբուժական կազմակերպություն ոչ հոժարակամ հոսպիտալացման ենթարկելու վերաբերյալ:

Խնամակալության ինստիտուտի բարեփոխումը պահանջում է նաև գործունակության կարգավիճակի իրավական վերանայում: Ներպետական համակարգը, որը դեռևս հիմնված է ամբողջական և համապարփակ գործունակությունից զրկման վրա, պետք է փոխարինվի հոգեկան առողջության վիճակին հարմարեցված («tailor-made») և համաչափ սահմանափակման, ապա՝ աջակցված որոշում կայացնելու համակարգով: Գործունակությունից զրկումը պետք է դիտվի միայն որպես ծայրահեղ միջոց, իսկ մասնակի սահմանափակումները՝ որպես հիմնական տարբերակ, ինչը կնվազեցնի շահագործման ռիսկերը և հնարավորություն կընձեռի անձին պահպանել ինքնավարությունը և մասնակցել սեփական կյանքի որոշումների ընդունմանը:

Հաշվի առնելով, որ հաստատություններում շահագործման խթաններից մեկը կարող է լինել փակ միջավայրը, անհրաժեշտ է անկախ մշտադիտարկման մեխանիզմների ընդլայնում և դրանց իրավասությունների հստակացում: Մասնավորապես, առաջարկվում է «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» ՀՀ սահմանադրական օրենքի 2-րդ հոդվածում և «Մարդկանց թրաֆիքինգի և շահագործման ենթարկված անձանց նույնացման և աջակցության մասին» ՀՀ օրենքում լրացումներ կատարելու միջոցով Մարդու իրավունքների պաշտպանին վերապահել ԵԽ Մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարի մասին կոնվենցիայով սահմանված Ազգային զեկուցողի մանդատը՝ հատկացնելով բավարար միջոցներ դրանից բխող գործառույթների արդյունավետ իրականացման համար:

Հատուկ ուշադրության է արժանի այս ոլորտում որակյալ և պարտադիր վերապատրաստումների ներդրումը: Բժիշկները, սոցիալական աշխատողները, խնամակալության մարմինները և հաստատությունների անձնակազմը պետք է ունենան պարտադիր վերապատրաստում՝ թրաֆիքինգի նշանների ճանաչման, խոցելիության գնահատման, շահերի բախման կանխման և իրավունքների պաշտպանության գործիքների վերաբերյալ: Այս փոփոխությունը պահանջում է նաև պետական ֆինանսավորում և կարողությունների զարգացում:

Օգտագործված նորմատիվ իրավական ակտերի և գրականության ցանկ

1. ՄԱԿ-ի «Անդրազգային կազմակերպված հանցավորության դեմ» կոնվենցիան լրացնող՝ Մարդկանց, հատկապես կանանց և երեխաների առևտրի կանխարգելման, արգելման և պատժի մասին արձանագրություն («Պալերմոյի արձանագրություն»), <https://www.ohchr.org/en/instruments-mechanisms/instruments/protocol-prevent-suppress-and-punish-trafficking-persons>
2. ՄԱԿ-ի «Խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի դեմ» կոնվենցիա (1984 թ.), <https://www.arlis.am/hy/acts/60506>
3. ՄԱԿ-ի «Խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի դեմ» կոնվենցիային կից կամընտիր արձանագրություն (OPCAT, 2002 թ.), <https://www.arlis.am/hy/acts/31421>
4. «Երեխայի իրավունքների մասին» ՄԱԿ-ի կոնվենցիա (1989 թ.), <https://www.arlis.am/hy/acts/60503>
5. «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» ՄԱԿ-ի կոնվենցիա (2006 թ.), <https://www.arlis.am/hy/acts/64762>
6. Եվրոպայի խորհրդի «Մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարի մասին» կոնվենցիա (2005 թ., CETS No. 197), <https://www.arlis.am/hy/acts/75324>
7. «Մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարի մասին Եվրոպայի խորհրդի կոնվենցիայի բացատրական զեկույց», <https://rm.coe.int/16800d3812>
8. «Մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարի մասին Եվրոպայի խորհրդի կոնվենցիայի իրականացման գնահատման հարցաշար. Չորրորդ գնահատողական փուլ. Թեմատիկ շեշտադրում՝ մարդկանց թրաֆիքինգի նկատմամբ խոցելիությունների հաղթահարումը», Մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարի Եվրոպայի խորհրդի փորձագետների խումբ (ԳՐԵՏԱ) (GRETA(2023)11), ընդունվել է 30 հունիսի 2023 թ., <https://rm.coe.int/questionnaire-for-the-evaluation-of-the-implementation-of-the-council-/1680abd8fa>
9. «Մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարի մասին Եվրոպայի խորհրդի կոնվենցիայի իրականացման վերաբերյալ զեկույց. Չորրորդ գնահատողական փուլ. Ռումինիա», Մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարի Եվրոպայի խորհրդի փորձագետների խումբ (ԳՐԵՏԱ) (GRETA(2025)13), ընդունված՝ 2 հուլիսի 2025 թ., հրապարակված՝ 12 նոյեմբերի 2025 թ., <https://rm.coe.int/greta-2025-13-fgr-rom-en/488029496a>
10. Եւ խոշտանգումների և անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի կանխարգելման Եվրոպական կոմիտեի (ԽԿԿ) զեկույցը Հայաստանի վերաբերյալ (2024 թ.), <https://rm.coe.int/1680b257b2>

11. «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենք, <https://www.arlis.am/hy/acts/216711/latest>
12. Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգիրք, <https://www.arlis.am/hy/acts/153080/latest>
13. «Մարդկանց թրաֆիքինգի և շահագործման ենթարկված անձանց նույնացման և աջակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենք, <https://www.arlis.am/hy/acts/198719/latest>
14. «Հոգեբուժական օգնության և սպասարկման մասին» Հայաստանի Հանրապետության օրենք, <https://www.arlis.am/hy/acts/198724/latest>
15. Հայաստանի Հանրապետության Քաղաքացիական դատավարության օրենսգիրք, <https://www.arlis.am/hy/acts/120057/latest>
16. Զուլիա Պլանինցեր, Հելմուտ Զաքս (խմբագիրներ), Մեկնաբանություն՝ Եվրոպայի խորհրդի «Մարդկանց թրաֆիքինգի դեմ գործողությունների մասին» կոնվենցիայի վերաբերյալ, Edward Elgar Publishing (Elgar Commentaries on the Council of Europe Conventions, 2020), էջ 266, <https://library.oapen.org/handle/20.500.12657/51308>
17. «Հենարաններ, խաչմերուկներ և ելքի ուղիներ. ճանապարհային քարտեզ համակարգերի և արդյունաբերական ոլորտների համար՝ մարդկանց թրաֆիքինգը կանխելու և խաթարելու նպատակով. Առողջապահություն», Polaris (հուլիս 2018 թ.), էջ 21, <https://polarisproject.org/wp-content/uploads/2018/08/A-Roadmap-for-Systems-and-Industries-to-Prevent-and-Disrupt-Human-Trafficking-Health-Care.pdf>
18. «Մարդկանց թրաֆիքինգի և շահագործման դեմ պայքարը և զոհերի իրավունքների պաշտպանությունը քրեակատարողական համակարգում»: Բանբեր Երևանի պետական համալսարանի. Իրավագիտություն, Սերգեյ Ղազինյան (2025 թ.), <https://journals.y-su.am/index.php/bulletin-y-su-jurisprudence/article/view/12997>
19. «Հոգեկան առողջության խնդիր ունեցող անձանց գործունակության սահմանափակման վերաբերյալ ներպետական իրավական դաշտի և գործնական կիրառման վերլուծություն. Նիկոլյանն ընդդեմ Հայաստանի գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վճռի կատարում», Սերգեյ Ղազինյան (2024 թ.), <https://rm.coe.int/execution-of-ecthr-judgement-nikolyan-vs-armenia-armenian-1-1-/native/1680b20c05>
20. «Հոգեբուժական կազմակերպություններում ոչ հոժարակամ հոսպիտալացման և բուժման մատով ազգային օրենսդրության և գործելակերպի վերաբերյալ զեկույց՝ հատուկ ուշադրություն դարձնելով ընթացակարգային երաշխիքներին», Սերգեյ Ղազինյան (2024 թ.), հատկապես էջեր 25-26, <https://rm.coe.int/report-on-involuntary-treatment/native/4880297b92>
21. «Մարդկանց թրաֆիքինգի և շահագործման ենթարկված անձանց հայտնաբերումը և ուղղորդումը՝ որպես մարդու իրավունքների պաշտպանության երաշխիք», ԴԱՏԱԿԱՆ իշխանություն, Սերգեյ Ղազինյան (2025 թ.), <http://ajra.am/hy/news/640>

22. «Գործունակության մասին» Միացյալ Թագավորության օրենք (2005 թ.), <https://www.legislation.gov.uk/ukpga/2005/9/contents>

23. Հոգեկան առողջության ծառայություններում աջակցված և փոխարինող որոշումների կայացման իրավական շրջանակների միջազգային համեմատական վերլուծություն, Դեյվիդսոն Գ., Բրոֆի Լ., Քեմփբել Զ., Ֆարել Ս. Զ., Գուդինգ Պ., Օ'Բրայեն Ա.-Մ. (2016 թ.), <https://pubmed.ncbi.nlm.nih.gov/26318975/>

24. Եվրոպական խորհրդարան, Ներքին քաղաքականությունների գլխավոր վարչություն, Քաղաքացիական իրավունքների և սահմանադրական հարցերի քաղաքականության բաժին (2008 թ.): Իրավունակություն չունեցող չափահասների պաշտպանության իրավական համակարգերի համեմատական ուսումնասիրություն. մասնավոր իրավունքի, մասնավոր միջազգային իրավունքի ազգային կանոններ և Եվրոպական միության հնարավոր օրենսդրական նախաձեռնություն (Միացյալ Թագավորություն, Ֆրանսիա, Գերմանիա, Շվեդիա, Չեխիայի Հանրապետություն, Ռումինիա) (2008 թ.), https://www.europarl.europa.eu/RegData/etudes/STUD/2008/408328/IPOL-JURI_ET%282008%29408328_EN.pdf

25. «Խնամակալությունը և մարդու իրավունքները Չեխիայի Հանրապետությունում. իրավունքի և քաղաքականության վերլուծություն» Mental Disability Advocacy Center (MDAC) (2011 թ.), https://www.mdac.org/sites/mdac.info/files/English_Guardianship_and_Human_Rights_in_the_Czech_Republic.pdf

ПРАВОВЫЕ МЕХАНИЗМЫ ПРЕДУПРЕЖДЕНИЯ ЗЛОУПОТРЕБЛЕНИЯ УЯЗВИМЫМ ПОЛОЖЕНИЕМ ЛИЦ С ПСИХИЧЕСКИМИ РАССТРОЙСТВАМИ И ИХ ТРАФИКИНГА

Аннотация

В статье рассматривается, каким образом уязвимость лиц с психическими расстройствами приводит к повышенному риску торговли ими и их эксплуатации, особенно в условиях психиатрических учреждений и учреждений социальной защиты. В центре анализа находится международно-правовая концепция «злоупотребления уязвимым положением», подчеркивающая ситуации, когда у человека отсутствует реальная и приемлемая альтернатива предупреждения эксплуатации. Хотя правовая система Армении формально признаёт беспомощное состояние, обусловленное психическими нарушениями, на практике сохраняются системные пробелы, в частности, в сфере недобровольной госпитализации, опеки, судебного контроля и независимого мониторинга. В статье раскрывается, что эксплуатация в закрытых учреждениях может выражаться в форме принудительного труда,

присвоения финансовых средств или психологического давления, что нарушает фундаментальные права личности на свободу и достоинство. В заключительной части представлены рекомендации по разработке политики и совершенствованию законодательства, направленные на усиление механизмов защиты, раннее выявление рисков, реформу института опеки и формирование политики, основанной на анализе данных.

Ключевые слова: злоупотребление уязвимым положением, психическое здоровье, торговля людьми, эксплуатация, психиатрические учреждения, опека, права человека.

LEGAL FRAMEWORKS FOR PREVENTING THE ABUSE OF THE VULNERABLE POSITION OF PERSONS WITH MENTAL HEALTH CONDITIONS AND TRAFFICKING

Annotation

This article examines how the vulnerability of persons with mental health conditions exposes them to a heightened risk of human trafficking and exploitation, particularly within psychiatric and social care institutions. The analysis focuses on the international legal concept of the “abuse of a position of vulnerability,” which highlights situations in which a person has no real and acceptable alternative to avoiding exploitation. While Armenia's legal framework formally recognises the helpless condition resulting from mental health impairments, systemic gaps persist in practice, especially in the areas of involuntary placement, guardianship, judicial oversight, and independent monitoring. The article demonstrates that exploitation in closed institutions may take the form of forced labour, misappropriation of financial resources, or the use of coercive influence, all of which undermine the fundamental rights to liberty and dignity. The concluding section offers policy and legislative recommendations aimed at strengthening protection mechanisms, improving early identification of risks, reforming the guardianship system, and promoting evidence-based policymaking.

Keywords: abuse of a position of vulnerability, mental health, human trafficking, exploitation, psychiatric institutions, guardianship, human rights.

Հոդվածը հանձնված է խմբագրություն 05.12.2025 թ., տրվել է գրախոսության 05.12.2025 թ., ընդունվել է փաշարության 15.12.2025 թ.: